



# «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

## ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Ընտանիքի հոգեբանություն,  
Կոնֆլիկտներ

Առարկան՝

Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝

Նելլի Ավետիսյան

Ուսումնական հաստատություն՝

Թաթուլի Թ.Կրպեյանի անվան  
միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Երևան 2022

## Բովանդակություն

Ներածություն.....	3
Թեմայի արդիականությունը.....	3
Ընտանիք հասկացությունը.....	3
Ընտանիքի հոգեբանություն.....	3
Ընտանեկան հոգեբանության ձևավորումը որպես գիտական դիսցիպլինա.....	4
Չետագրտության նպատակը.....	8
Չետագրտության խնդիրները.....	8
Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ.....	9
Եզրակացություն.....	13
Օգտագործված գրականություն.....	15

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

### **Թեմայի արդիականությունը**

Ընտանեկան փոխհարաբերությունները, ընտանիքում առկա կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը ընտանիքի անդամների և հատկապես երեխաների հոգեկան զարգացման վրա մշտապես եղել և մնում են արդիական: Ընտանիքը աշխարհի ամենահին կառույցներից մեկն է, և այն մեծ դեր է խաղում մարդկային հասարակության մեջ: Մարդկության ողջ պատմության ընթացքում ամուր ընտանիքները ամուր հասարակության հիմքն են եղել: Եվ հենց ընտանեկան օջախում է, որ դաստիարակություն ստանալով՝ երեխան կարող է լիարժեք անձնավորություն դառնալ և հետագայում ստեղծել իր առանձին ընտանիքը, որը հիմնված կլինի բարոյահոգեբանական բարձր արժեքների վրա:

### **Ընտանիք հասկացությունը**

Ընտանիքն ամուսնության, ազգակցության կամ որդեգրման վրա հիմնված մարդկանց փոքր խումբ է, որն ապրում է մի հարկի տակ և վարում ընդհանուր տնտեսություն: Ընտանիքի անդամները սովորաբար միմյանց հետ կապված են զգացմունքային կապերով, միմյանց նկատմամբ զգում են փոխադարձ պատասխանատվություն: Հոգեբանության և հարակից գիտությունների մեջ ընտանիք հասկացությունը այն կարևոր ֆենոմենն է, որը ուղեկցում է մարդուն իր ողջ կյանքի ընթացքում [1]:

Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն:

### **Ընտանիքի հոգեբանություն**

Մարդկանց միջև հարաբերությունները հոգեբանական գիտելիքների համակարգում հասկացվում են որպես, առաջին հերթին, փոխազդեցության որոշակի համակարգ, շփումներ, կապեր, և երկրորդ, գնահատում այս փոխազդեցությունների և շփումների առարկայի կողմից, ինչպես նաև դրանց մասնակից գործընկերների կողմից [2]: Այս ասպեկտները՝ օբյեկտիվ և գնահատողական, ներկայացնում են ընտանեկան կյանքի իրականության երկու

ասպեկտներ: Ընտանիքի համար շփումների հաճախականությունը, դրանց բովանդակությունը որոշվում է նրանով, թե ինչպես են ընտանիքի անդամները առնչվում միմյանց հետ, այսինքն՝ միջանձնային հարաբերությունների հուզական բաղադրիչը սուբյեկտիվ և օբյեկտիվորեն որոշում է փոխգործակցության վիճակն ու զարգացումը [1]:

## **Ընտանեկան հոգեբանության ձևավորումը որպես գիտական դիսցիպլինա**

Ընտանիքի հոգեբանության նախապատմությունը կարելի է գտնել հնագույն տեքստերում, որտեղ խոսվում է ընտանիքի մասին առասպելաբանական և դաստիարակչական տեսանկյունից: Հետագայում փիլիսոփաները գաղափար են տվել զգայական սիրո և ամուսնության ու ընտանեկան հարաբերությունների մասին: Եթե ընտանեկան հարաբերությունները մեկնաբանենք որպես անձի և ընտանիքի հոգեկան ռեֆլեքսների պատմության արդյունքում առաջացած հայեցակարգ, ապա դրա ակունքները հասնում են Պլատոնի փիլիսոփայական իմաստությանը (Երկխոսություններ« Պետություն»ր« Օրենքներ, Տոն»ր), Արիստոտելի (Քաղաքականությունը), Պլուտարքոս (Հանձնարարություն ամուսիններին), Ֆ. Էնգելս (Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը), Մ. Սոստեն (Փորձեր), Ի. Կանտ (Բարքերի մետաֆիզիկա), Գ Յեգել (Կրոնի փիլիսոփայություն, Իրավունքի փիլիսոփայություն), Ա. Շոպենհաուեր (Աշխարհիկ իմաստության աֆորիզմներ և այլն: Փիլիսոփայական գաղափարներին փոխարինում են ընտանիքի ծագման և զարգացման ազգագրական և պատմական ուսումնասիրությունները, որոնք հետագայում վերածվում են ընտանիքի ներկային և ապագային ուղղված հոգեբանական ուսումնասիրությունների ցիկլի: Ժամանակակից գիտությունը կուտակել է հսկայական տեղեկություն, որը նկարագրում է ընտանիքում առկա պաթոլոգիական երևույթները և դրանց հաղթահարման ուղիները: Դրանց հիմքում ընտանիքն ու ամուսնությունը դարձան հոգեբանական երևույթ[1]:

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում՝ մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով, ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան

անբարենպաստ փոխհարաբերություններ: Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին՝ դրամին, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև: Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի: Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու: Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1. Սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում:
2. Դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն:
3. Ցածր կրթամակարդակ:
4. Աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ:
5. Կախվածություն ծնողների ընտանիքներից[3]:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների 4 տեսակ.

1. Ներանձնային. պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:
2. Միջանձնային. կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:
3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատափ նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

4. Միջխմբային կոնֆլիկտ. այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև: Կոնֆլիկտային գործունեության հիրմքում ընկած են՝

- գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք)
- ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը)
- Ներքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում):

Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անըդիստ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, եթե չկան վեճեր նշանակում է ընտանիքում տիրում է սառը պաշտոնական հարաբերություններ:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, ամբարենպաստ ընտանիքներ: Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք: Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը: Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է՝ սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարածայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը և ընտանիքում մեծացող երեխայի կամ երեխաների հոգեկան և ֆիզիկական զարգացումը:

Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական

գործոններով: Բացի դա, ծնողների մեծամասնությունը չի տիրապետում երեխայի հետ վարվեցողության կանոններին[4]:

Երջանիկ ընտանիքը խաղաղ ու ապահով հանգրվան է: Ցավոք, ընտանիքն այսօր ճգնաժամ է ապրում: Այդ ամենից բացի՝ ընտանիքները տառապում են նաև անչափահաս երեխաների ըմբոստության, երեխաների կամ կողակցի հանդեպ դաժան վերաբերմունքի, հարբեցողության և այլ սարսափելի խնդիրների պատճառով: Բազում երեխաների ու մեծահասակների համար ընտանիքը հեռու է խաղաղ ու ապահով հանգրվան լինելուց:

## **Չետագոտության նպատակը**

Մեր հետագոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ընտանիքի հոգեբանությունը, ընտանիքում առկա կոնֆլիկտները և դրանց դերը աշակերտների հոգեկան և ֆիզիկական առողջության վրա և այն խնդիրները, որոնց հետ բախվում են երեխաները կրթական գործընթացում՝ կապված վերոնշյալի հետ:

## **Չետագոտության խնդիրները**

Չետագոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. Հասկանալ տվյալ թեմայի էությունը՝ վերլուծելով մեզ արդեն հայտնի տեղեկությունները:
2. Լուսաբանել ընտանեկան դաստիարակության դերը երեխայի անձի սոցիալականացման և դաստիարակության գործընթացում:
3. Լուսաբանել ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը դպրոցականի կրթական գործընթացի և նրանց՝ ուսուցիչների և աշակերտների հետ ունեցած փոխհարաբերությունների վրա:



## ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Հետազոտությունը կատարել ենք Արագածոտնի մարզի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցի 4 դասարաններում՝ ընդհանուր ընտրելով 8 երեխա: Ինչպես բոլոր հանրակրթական դպրոցներում, այնպես էլ մեր դպրոցում սովորում են առաջադիմության տարբեր ցուցանիշներ, վարքային յուրահատուկ առանձնահատկություններ ունեցող աշակերտներ: Այդ իսկ պատճառով ընտրել ենք նմանատիպ երեխաների՝ նման վարքով ու առաջադիմությամբ երկուական երեխա: Ելնելով առարկայի առանձնահատկությունից՝ հաճախ են կազմակերպվում քննարկումներ, վերլուծություններ, բանավեճեր և էքսկուրսիաներ, որոնց ժամանակ էլ հատկապես բացահայտվում են նմանօրինակ երեխաները:

Առաջին խմբում Վարդանը և Արփինեն են: Նրանք դասերի ժամանակ, քննարկումների, բանավեճերի ընթացքում հիմնականում ինքնամփոփ են, աշխատում են <<թաքնվել>> ուսուցչի, տվյալ դեպքում իմ հայացքից, մերթընդմերթ ընկնում են երազանքների և անուրջների գիրկը՝ հառելով հայացքը առաստաղին, կամ պատուհանից դուրս, փորձում են իրենց վրա ուշադրություն գրավել, առաջացնել խղճահարություն՝ երբեմն, անգամ ներկայացնելով կեղծ հիվանդության սիմպտոմներ: Եկրորդ խմբում Գոհարն ու Արմենն են: Նրանք ո՛չ դասի և ո՛չ էլ արտադասարանական պարապմունքների ժամանակ կամ դասից դուրս չեն ցուցաբերում նախաձեռնություն, չունեն ինքնուրուկություն, վճռականություն, վախենում են հստակ արտահայտել մտքերը, միշտ <<սպասում են>> նախատինքի խոսքերի՝ չնայած այն բանին, որ պատրաստ են տվյալ դասին: Դասամիջոցների մոտ են իրենց տեղում նստած՝ պատճառաբանելով հոգևածությունը: Չեն մասնակցում էքսկուրսիաներին: Այսինքն միշտ փորձում են մնալ սովորում: Երրորդ խմբում Անահիտն ու Կարենն են: Նրանք գրեթե միշտ գերազանց պատրաստ են դասերին, հանդես են գալիս որպես հուշարար, նախաձեռնող են. ամեն դասի համար ունեն որոշակի առաջարկ՝ սկսած էքսկուրսիայից, վերջացրած դասարանի ներսում կազմակերպվելիք ֆիլմադիտումներով և բանավեճերի կազմակերպումով: Չորրորդ խմբում ընդգրկվել են Հայկն ու Մարիամը: Նրանք միշտ փորձում են անել ավելին, քան իրենց հնարավորությունները թույլ կտան: Ամեն դասին ձեռք են բարձրացնում ու դասը ներկայացնելու ցանկություն հայտնում: Մարիամը միշտ փորձում է պատասխանել հարցերին՝ իրեն հարմար տարբերակով, երբեմն ամբողջովին շեղվելով հարցից. միշտ պնդում է իր տեսակետը՝ անկախ այն բանից ինքը ճիշտ է, թե ոչ: Շատ ինքնավստահ է, սիրում է, որ միշտ լինի ուշադրության կենտրոնում, արժանանա գովեստի խոսքերի և ենթարկեցնի ամբողջ դասարանը իրեն: Հայկը

գրեթե ամբողջովին կրկնում է Մարիամի վարքը, մի տարբերությամբ միայն. բացի իր սեփականը պնդելուց, բոլորին սխալ է համարում:

Չետաքրքրականն այն է, որ երբ ուսուցիչներով հավաքվում ենք ուսուցչանոցում և քննարկում որևէ դասարանի աշակերտների վարքն ու առաջադիմությունը, գրեթե բոլորը վերոնշյալ երեխաների մասին ունեն նույն կարծիքը, ինչ ես: Ու երբ խոսք է գնում այս կամ այն երեխայի մասին, առաջին հերթին մեզ հետաքրքրում է այն, թե ինչ ընտանիքից է նա, ինչպիսի դաստիարակություն է ստացել, ովքեր են նրա ծնողները: Եթե նրա վարքը գովասանքի է արժանանում, ապա պարզ է դառնում, որ տվյալ անձը դաստիարակվել է լիարժեք, բարենպաստ ընտանիքում և հակառակը: Քանի որ մեր գյուղը այնքան էլ մեծ չէ, բոլորը միմյանց ճանաչում են, կիսում միմյանց հոգսն ու ուրախությունը, մեզ համար ավելի է հեշտանում պարզելու այս կամ այն երեխայի վարքի ու առաջադիմության լավ կամ վատ լինելու պատճառները՝ ավելի խորքային մակարդակով:

Այսպիսով, վերլուծելով Վարդանի և Արփիների ընտանիքները, հասկանում ենք, որ նրանք մեծացել և դաստիարակություն են ստանում այնպիսի ընտանիքներում, որտեղ իրենք սիրված չեն ու նրանց ծնողները դա հաճախ ցույց են տալիս, և նրանք այդ դաժան իրականությանը տարբեր ձևով են արձագանքում: Փորձում են ընտանիքից դուրս զգալ այն ուշադրությունը, որը երբեք չեն ստացել իրենց ընտանիքներում, բայց երբեմն, չստանալով այն, ինչ ակնկալում են, դառնում են ագրեսիվ, նախանձ ու չար:

Դաստիարակության այլ տարբերակը գերիսամակալությունն է: Գոհարի ընտանիքում գերիսամակալությունն է: Երեխային թույլ չեն տալիս ցուցաբերել նախաձեռնություն, ինքնուրույնություն, վճռականություն: Արմենի ընտանիքում հակասող դաստիարակություն է. մի տատիկն ասում է մի բան, մյուսը՝ մեկ ուրիշ, ծնողները, իրենց հերթին, այլ պահանջներ են ներկայացնում երեխային:

Անահիտի ու Կարենի ընտանիքներում ամեն ինչ հարթ է: Անահիտի ընտանիքը սոցիալապես շատ լավ վիճակում է, բոլորը աշխատում են, բայց և պատշաճ ուշադրություն են դարձնում իրենց երեխաներին: Ընտանիքում բոլոր երեխաները մասնակցում են տարատեսակ պարապմունքների, խմբակների, ծնողները քաջալերում են երեխաների յուրաքանչյուր նախաձեռնություն: Կարենի ընտանիքում աշխատում է միայն հայրը, ընտանիքը ոչ այնքան լավ սոցիալական վիճակում է, մայրը և տատիկ-պապիկները զբաղվում են երեխաների դաստիարակությամբ. մայրը մասնագիտությամբ բուժքույր է: Ընդհանուր առմամբ՝ ընտանիքում հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի, ներողամտության վրա:

Հայկն ու Մարիամը ունեն նմանատիպ վարք և առաջադիմություն, սակայն նրանց ընտանիքները իրենց սոցիալական վիճակով ու կրթական մակարդակով միանգամայն տարբեր են: Մարիամի ընտանիքում բոլորը կրթված են և աշխատում են, ավելի գումար վաստակելու մոլուցքով տարված, անուշադրության են մատնել երեխաներին: Երեխան փորձում է ընտանիքի բացը կոմպենսացնել ընտանիքից դուրս: Հայկի ընտանիքը սոցիալապես անապահով վիճակում է, ծնողները ամուսնալուծված են, նա գտնվում է մոր խնամքի տակ: Մայրը չունի մասնագիտություն և կայուն եկամտի աղբյուր, սակայն իր երեխային <<դրդում>> է սովորել, ամենուր գովաբանում են և ներկայացնում իրենց երեխաների ցուցաբերած առաջադիմությունը, որը միշտ չէ, որ համապատասխանում է իրականությանը: Այդ կերպ նա փորձում է լրացնել բացակայող ծնողի դերը և, գործի դնելով իր՝ պաշտպանողական ռեակցիան, փորձում է ամեն բան ներկայացնել կատարյալ ձևով: Հայկը միշտ վստահ է, որ ինքը ամեն ինչ գիտի և արժանի է բարձր գնահատանքի: Այսինքն, կարող ենք ասել, որ ընտանիքների նմանատիպ վարվեցողության դրդապատճառները տարբեր են:

Դաստիարակության արատներն անբարենպաստ ընտանիքի առաջնային և գլխավոր ցուցանիշներն են: Ոչ նյութականը, ոչ հոգևորը չեն բնութագրում բարենպաստ կամ անբարենպաստ ընտանիքը, այլ միայն երեխայի նկատմամբ վերաբերմունքը:

Լինելով երեխայի անձի ձևավորման, բնականոն զարգացման կարևորագույն սոցիալական ինստիտուտը՝ ընտանիքում գոյություն ունեցող անբարենպաստ պայմաններն առավել խոցելի և սոցիալական ռիսկի են ենթարկում հատկապես երեխային: Ընտանիքում տնտեսական, սոցիալ-հոգեբանական, բախումնային և այլ բնույթի հիմնախնդիրներն ու դրանց հետևանքները անմիջական ազդեցություն են ունենում երեխայի զարգացման վրա ու խոչընդոտում նրա պահանջմունքների բավարարմանը, որն էլ անհետևանք չի մնում բռնությունից, չարաշահումից կամ խիստ վերաբերմունքից երեխայի պաշտպանության ու լավագույն շահի պահպանման համար: Վերջիններս էլ կարող են պարարտ հող ստեղծել արդեն դեռահասության տարիքում շեղվող վարքի որոշ դրսևորումների առաջացման համար: «Ընտանիքում հոգևոր և սոցիալական փորձի պակասը, սահմանափակ մշակութային արժեհամակարգը և մտահորիզոնը, ինչպես նաև ծնողների՝ մանկավարժական առումով չտեղեկացվածությունը այդ պայմաններում ձևավորվող անձին գոյության արտաքին պայմաններից կախյալ են դարձնում: Ծնողների կողմից անուշադրության մատնված, անտեսված և նրանցից աջակցություն չստացող երեխան կորցնում է նրանց հանդեպ հարգանքը, վստահությունը և սերը:

Միաժամանակ՝ երեխան զրկվում է կյանքում իրեն անհրաժեշտ հենարանից, որի արդյունքում նա բախվում է անկանխատեսելի բարդ իրավիճակների[5]: Նմանատիպ իրավիճակներում գտնվող երեխաները դառնում են ռիսկային խումբ: Այս տեսանկյունից՝ պետք է նաև ընդգծել այն հանգամանքը, որ կոնֆլիկտային ընտանիքներում խաթարվում են և արդյունավետ չեն իրականացվում երեխայի ինչպես սոցիալականացման, այնպես էլ դաստիարակության գործառույթները, նա դառնում է անբարենպաստ ընտանեկան միկրոմիջավայրի բացասական գործոնների ազդեցության անմիջական կրողն ու թույլ օղակը, որն էլ ռիսկի առաջին նախահիմքերից է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Առողջ ընտանեկան փոխհարաբերությունների բացակայությունը բացասաբար է ազդում երեխայի սոցիալականացման վրա, ինչպես նաև խոչընդոտում ընտանիքում դաստիարակության ձևավորման գործընթացին՝ հանգեցնելով դաստիարակության շտկողազարգացնող բնույթի խախտման և դրա արդյունավետության նվազման: Նմանատիպ հարաբերություններով բնորոշվում են հիմնականում կոնֆլիկտային ընտանիքները:
- Կոնֆլիկտային ընտանիքները բնութարկվում են ընտանիքի անդամների անառողջ, հակասական, բախումնային փոխհարաբերությունների առկայությամբ, նրանց միջև պարտականությունների և իրավունքների անհամաչափ բաշխվածությամբ, երեխաների ու նրանց ծնողների, ինչպես նաև մեծահասակների ու հասակակիցների հետ երեխաների բարդացված փոխհարաբերություններով: Խաթարված է ծնող-ծնող, երեխա-ծնող և, առհասարակ՝ ընտանիք-հասարակություն բնականոն փոխազդեցությունը:
- Կոնֆլիկտային ընտանիքներում, որոնք համարվում են երեխայի սոցիալ-հոգեբանական զարգացման համար անբարենպաստ ընտանիքներ, գերիշխում են ընտանեկան փոխհարաբերությունների այն ձևերը, որոնք հաճախ հանգեցնում են երեխաների շեղվող վարքի ձևավորմանը: Նման ընտանիքների համար բնութագրական են մասնավորապես.
  1. Դաստիարակության կոնֆլիկտային բնույթը, որն առավելապես գերակայում է ոչ լիարժեք ընտանիքներում, ինչպես նաև երեխաների ու ծնողների երկարատև առանձին ապրելը:
  2. Դաստիարակչական և ընտանեկան հարաբերությունների անհամերաշխությունը, երբ մշակված է միօրինակ մոտեցում և ընդհանուր պահանջներ երեխայի նկատմամբ:
  3. Ընտանիքում հակահասարակական հարաբերությունները, որին բնորոշ է ակոհոլի, թմրամիջոցների սիստեմատիկ օգտագործումը, ընտանեկան բռնությունների դրսևորումը:
- Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների հետ: Դա բարդ հարց է, որի լուծման ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում խստության և

քնքշության <<համամասնությունը>>: Չի՛ կարելի անընդհատ գովասանքի արժանացնել, խրախուսել, կատարել նրա բոլոր պահանջները, և, ընդհակառակը՝ անթույլատրելի է երեխային հաճախակի պարսավանքի ենթարկելը, պատժելն ու մերժելը: Այդ ամենը պետք է լինի չափավորված ու դուրս չգա անհրաժեշտության սահմաններից: Կարևոր է նաև երեխայի անհատականության պահպանումը, իհարկե, չանտեսելով հասարակական վարքի կանոնները:

Եթե բոլոր ընտանիքներում ծնող-երեխա փոխհարաբերությունները կառուցվեն սիրո, համերաշխության ու ներողամտության, միմյանց զիջելու և դիմացինի կարծիքը հաշվի առնելու սկզբունքով, ապա մեր երկրում երեխաները կլինեն զարգացած ու մարդասեր: Եթե ընտանեկան դաստիարակության հիմունքները կառուցված լինեն ազգային ավանդույթների և ժամանակակից նախադպրոցական և դպրոցական մանկավարժական պահանջների ոգով, ապա հայ ընտանիքը կպահպանի իր ազգահին դիմագիծը, և երեխաները կլինեն իրենց ծնողների և հայրենիքի արժանի զավակներ: Նման սերունդները հետագայում կստեղծեն իրենց առանձին ամուր ընտանիքը, որն էլ հենց ազգի գոյապահպանման հիմքն է:

*Ելնելով եթիկայի նորմերից՝ նյութում առկա անունները փոխված են:*

*Մեր փոքրիկ հետազոտությունը կատարվել է ուսումնական տարվա ավարտից հետո՝ հիմնվելով ուսուցման պրոցեսի վերլուծության և ուսուցչական կոլեկտիվի գրեթե ամենօրյա քննարկումների վրա:*

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Шнайдер Л. Б., Семейная психология
2. Гозиан Л.Я. Психология эмоциональных отношений.
3. [https://hy.wikipedia.org/wiki/%D4%B8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6\\_%D5%AF%D5%B8%D5%B6%D6%86%D5%AC%D5%AB%D5%AF%D5%BF](https://hy.wikipedia.org/wiki/%D4%B8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D5%B8%D5%B6%D6%86%D5%AC%D5%AB%D5%AF%D5%BF)
4. <https://www.doctors.am/yntanekan-konfliktner>
5. Мошкова И. Н., Укрепление семьи как путь профилактики детского сиротства, [http://www.rondtb.msk.ru/info/ru/family\\_ru.htm#Top](http://www.rondtb.msk.ru/info/ru/family_ru.htm#Top)